

Հարց

Նոր աշխատողի գրանցման հայտը ե՞րբ պետք է ներկայացվի հարկային մարմին:

Պատասխան

«Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ հարկային գործակալները նոր աշխատողի գրանցման հայտը հարկային մարմին են ներկայացնում աշխատողին աշխատանքի ընդունելուց հետո, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ աշխատողի կողմից աշխատանքը փաստացի սկսելու օրվան նախորդող օրվա ավարտը:

Հարց

Եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկում ներառվում են, արդյոք, անձնավորված տեղեկություններ բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների մասով (մասնավորապես՝ ֆիզիկական անձանց ավանդների դիմաց վճարված տոկոսներ և պահված եկամտային հարկ):

Պատասխան

Ոչ: Եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկում բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկատվության մասով ներկայացվում են միայն ամփոփ տեղեկություններ՝ առանց այդ եկամուտները ստացած ֆիզիկական անձանց անհատական տվյալները նշելու:

Հարց

Նոր աշխատողի գրանցման հայտը սահմանված ժամկետից ուշ ներկայացվելու կամ չներկայացվելու դեպքերում ինչպիսի՞ պատասխանատվություն է առաջանում:

Պատասխան

Նոր աշխատողի գրանցման հայտը սահմանված ժամկետից ուշ ներկայացվելու կամ չներկայացվելու դեպքերում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ԼՂՀ օրենսգրքի համաձայն, առաջանում է վարչական պատասխանատվություն: Միաժամանակ այն դեպքում, երբ հարկային մարմնի կողմից իրականացվող ստուգմամբ հայտնաբերվում է փաստացի աշխատանք կատարող վարձու աշխատող, որի համար գրանցման հայտը չի ներկայացվել մինչև ստուգումը փաստացի սկսելու օրվան նախորդող օրվա ավարտը, գործատուն այդ վարձու աշխատողների համար վճարում է եկամտային հարկ՝ «Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված չափերով:

Հարց

Մեկ գործարքի դիմաց 300 հազար դրամը գերազանցող գումարը մաս-մաս կանխիկ վճարելու դեպքում կդիրվի՞, արդյոք, դրամարկղային գործառնությունների խախտում:

Պատասխան

«Դրամարկղային գործառնությունների մասին» ԼՂՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ի մասի «ա» ենթակետի համաձայն՝ ապրանքների, ծառայությունների, աշխատանքների միանվագ գնման դեպքում դրանց դիմաց կանխիկ դրամով վճարման գումարի առավելագույն չափը սահմանված է 300 հազար դրամ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն հոդվածով

սահմանված սահմանափակումների կիրառման իմաստով կանխիկ դրամով վճարում են համարվում գնման դիմաց կատարված բոլոր վճարումները: Հետևաբար, եթե միանվագ գործարքի արժեքը գերազանցում է 300 հազար դրամը և վճարումը կատարվում է մաս-մաս կանխիկ դրամով, ապա համարվում է դրամարկղային գործառնությունների մասին օրենսդրության պահանջի խախտում և կիրառվում է «Դրամարկղային գործառնությունների մասին» ԼՂՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանված պատասխանատվությունը:

Հարց

Գրավ դրված գույքը սեփականության իրավունքով գրավառու բանկին (վարկային կազմակերպությանը) անցնելու դեպքում ո՞րն է համարվում ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառություն:

Պատասխան

Համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ պարբերության՝ գրավ դրված գույքը սեփականության իրավունքով գրավառու բանկին (վարկային կազմակերպությանը) անցնելու դեպքում ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառություն է համարվում գրավ դրված գույքի՝ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված կարգով որոշվող իրացման գնի և վարկային պարտավորության դրական տարբերությունը:

Հարց

Շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարան անմիջական արտադրողից կամ անմիջական ներմուծողից ձեռք բերած ավելացված արժեքի հարկ վճարողները կարո՞ղ են, արդյոք, հաշվանցել այդ տարայի մասով մատակարարներին վճարված ավելացված արժեքի հարկի գումարները:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարան անմիջական արտադրողից կամ անմիջական ներմուծողից ձեռք բերած ավելացված արժեքի հարկ վճարողները դրա մասով հաշվանցումներ չեն կատարում (ավելացված արժեքի հարկի գումարները միացվում են տարայի ձեռքբերման գնին), բացառությամբ ապրանքների արտահանման դեպքի: